



## Չօգտագործված տնային ներկերի արդյունավետ կառավարման ծրագիր

Ամեն տարի Միացյալ Նահանգներում վաճառվում է մոտ 780 միլիոն գալոն (2.95 բիլիոն լիտր) շինարարական նպատակներով օգտագործվող ներկ: Գիտե՞ի՞ք, որ այդ ներկի մոտ 10 տոկոսը չի օգտագործվում և ենթակա է հանձնման:

Ներկօգտագործման արդյունավետ կառավարման մասին նահանգային օրենքը պահանջում է, որ ներկերի արտադրության ոլորտը մշակի ինքնաֆինանսավորվող և շրջակա միջավայրի պահպանության պատասխանատվությամբ մի ծրագիր, որով կիրականացվի շինարարական նպատակներով օգտագործվող ներկի թափոնների կառավարումը:

Ծրագիրը նախատեսում է ուսուցում ճիշտ քանակով ներկ գնելու վերաբերյալ, մնացորդային ներկը օգտագործելու ցուցումներ, ինչպես նաև նախատեսում է հանձնման կետերի համար հարմար վայրերի հատկացում նահանգի ողջ տարածքում:

Ներկ արտադրողները հիմնել են "PaintCare" ոչ առևտրային կազմակերպությունը, որպեսզի իրականացնեն ներկօգտագործման արդյունավետ կառավարման ծրագրեր կիրառելի օրենքներ ունեցող նահանգներում:

## PaintCare-ում ընդգրկված ապրանքներ

Այս ապրանքները կարող եք գնել՝ վճարելով դրանց դիմաց և ընդունվում են հանձնման կետերում:

- Ներքին և արտաքին պատերի ներկման ներկեր՝ լատեքսային, ակրիլային, ջրային հիմքով, ակլիդային, յուղային հիմքով, էմալային (ներառյալ տեքստուրային ծածկանյութերը)
- Տախտակների ներկեր, հատակի ներկեր (ներառյալ ճկուն ձևափոխության ենթարկվող ներկերը)
- Պրայմերներ, հերմետիկներ, նախաներկեր
- Պիգմենտներ
- Շելլաքներ, լաքեր, փայլանյութեր, ուրետաններ (միակոմպոնենտային)
- Բետոնի/քարե պատերի/փայտի ջրակայուն հերմետիկներ և մեկուսիչ նյութեր (ոչ ձյուրի կամ հանքածյուրի հիմքով)
- Մետաղի պաշտպանիչ նյութեր, հակակոռոզիոն ծածկանյութեր
- Դաշտերի ու գազոնների ներկեր

Արտահոսք ունեցող, առանց պիտակի և դատարկ տարաները չեն ընդունվում հանձնման կետերում:

## ⊘ PaintCare-ում չընդգրկված ապրանքներ

- Ներկերի լուծիչներ, լաքերի լուծիչներ, այլ լուծիչներ
- Աերոզոլային ներկեր (աերոզոլային տարաներով)
- Ավտոմոբիլների ու նավերի ներկեր
- Գեղանկարչական ներկեր
- Ծեփանյութեր, էպօքսիդային մածվածքներ, սոսինձներ, սոսնձանյութեր
- Ներկային հավելումներ, գունանյութեր, երանգներ, խեժեր
- Փայտի պաշտպանիչ ծածկանյութեր (թունաքիմիկատներ պարունակող)
- Տանիքի կարկատման ու նորոգման նյութեր
- Անֆալտ, ձյուր և հանքածյուրի հիմքով ապրանքներ
- Երկկոմպոնենտային ծածկանյութեր
- Փայտե տախտակներ մաքրող նյութեր
- Ճանապարհային ու երթևեկության նշանների ներկեր
- Արդյունաբերական տարածքներում պաշտպանիչ ներկանյութեր ու լաքածածկող նյութեր
- Օրիգինալ սարքավորումների արտադրողների (OEM) (խանութում օգտագործվող) ներկեր ու լաքանյութեր

PaintCare-ին չպատկանող ապրանքների հանձնման ու դրանք պատշաճ ձևով հեռացնելու մասին տեղեկատվության համար խնդրում ենք կապվել ձեր աղբահանողի, շրջակա միջավայրի հիգիենայի հարցրեով զբաղվող գործակալության, տնային տնտեսությունների վնասակար աղբի կառավարման ծրագրի գրասենյակի կամ քաղաքաշինության ղեկավարամենտի հետ:



# Հանձնում

## PaintCare-ի միջոցով



## Հին ներկի հանձնման կետեր

PaintCare-ի միջոցով ներկի մաքուր դերի հանձնումը շատ հարմար է: Մենք բացել ենք ներկերի հանձնման կետեր ողջ սահանգում՝ ներկօգտագործման արդյունավետ կառավարման օրենքի պահանջներին համաձայն: Ձեզ ամենամոտ հանձնման կետը գտնելու համար օգտագործեք PaintCare-ի որոնման ֆունկցիան [www.paintcare.org](http://www.paintcare.org) կայքէջում կամ զանգահարեք մեր թեժ գիծ՝ (855) 724-6809 հեռախոսահամարով:

## Ի՞նչպես հանձնել

PaintCare-ի կետերն ընդունում են բոլոր ապրանքանիշերի շինարարական հին ներկեր, պիգմենտներ ու լաքեր՝ անգամ եթե դրանք ունեն 20 տարվա հնություն: Տարաների պարունակությունը պետք է լինի հինգ գալոնի (18.93 լիտր) չափով կամ ավելի քիչ: Իսկ ներկերի որոշ տեսակներ չեն ընդունվում: Հանձնման ենթակա ապրանքների ցանկը տե՛ս հակառակ կողմում:

PaintCare-ի բոլոր հանձնման կետերը յուրաքանչյուր այցելության ժամանակ ընդունում են մինչև հինգ գալոն (18.93 լիտր) ներկ: Որոշ կետերում ընդունում են ավելի շատ: Խնդրում ենք զանգահարել կենտրոնին նախապես՝ համոզվելու, որ նրանք կարող են ընդունել այն ներկի քանակը, որը դուք ցանկանում եք հանձնել:

Համոզվեք, որ ներկի բոլոր տարաներն ունեն կափարիչներ և արտադրողի պիտակներ, և դրանք ապահով կերպով տեղավորեք ձեր ավտոմեքենայում: Դրանք տարեք հանձնման կետեր նրանց ամենօրյա աշխատանքային ժամերին: Մենք կվերցնենք դրանք այնտեղից:

## Ի՞նչ է լինում ներկի հետ:

PaintCare-ը աշխատանք է տանում այն ուղղությամբ, որ ձեր մաքուր դերի ներկը խառնվի հանձնված մյուս ներկերի հետ, օգտագործվի որպես վառելիք, դրանից պատրաստվեն այլ ապրանքներ, կամ իրականացվի հեռացում պատշաճ կերպով:

## Ո՞վ կարող է օգտվել ծրագրից

**Մարդիկ**, ովքեր բերում են իրենց տան ներկը, կարող են բերել լատեքսային կամ յուղային հիմքով ներկ այն քանակով, որքան պատրաստ է ընդունել հանձնման կետը:

**Մասնավոր ընկերությունները** (ներկարարական աշխատանքներ իրականացնող և այլ ընկերություններ) կարող են օգտվել այս ծրագրից մեկ սահմանափակմամբ՝ եթե ձեր ընկերությունն ունենում է ամսական ավելի քան 220 ֆունտ, ինչը կազմում է 99.79 կգ (մոտ 20-30 գալոն - 75.71-113.56 լիտր) վնասակար թափոն, ապա կարող եք հանձնման կետերում հանձնել միայն ձեր լատեքսային ներկերը, բայց ոչ յուղային հիմքով ներկերը: Այս սահմանափակման մասին ավելին իմանալու համար կապվեք PaintCare-ի հետ:

## Մեծաքանակ ընդունում

Եթե դուք ունեք հանձնելու առավել 200 գալոն (757.08 լիտր) ներկ ձեր ընկերությունում կամ տանը, դիմեք առաքման անվճար ծառայությանը: Խնդրում ենք զանգահարել մանրամասների և ծանոթանալու համար կամ պահանջել հանդիպում:



## PaintCare-ի վճարները

PaintCare-ի ֆինանսավորումն իրականացվում է ներկարտադրողների կողմից սահանգում վաճառած ներկի յուրաքանչյուր տարայի համար կատարած վճարումների հաշվին: Արտադրողները վճարները փոխանցում են մանրածախ վաճառողներին, ովքեր այնուհետև այդ վճարն ավելացնում են ներկի գնին: Խանութները կարող են ընտրել՝ ցույց տալ կամ ցույց չտալ այդ վճարն իրենց անդորրագրերում: Վճարներն սկսվում են 35 ցենտից մինչև \$1.99 և տարբերվում են ըստ տարայի չափի ու ըստ սահանգի

- \$0.35 - \$0.49: Փոքր տարաներ (օր. պիտակներ և քվարտեր)
- \$0.75 - \$0.99: Միջին չափսի տարաներ (օր. 1 գալոն)
- \$1.60 - \$1.99: Մեծ չափսեր՝ մինչև 5 գալոն



## Դեպոզիտ չէ

Վճարը չի համարվում դեպոզիտ՝ այն կազմում է վաճառքի գնի մասը: Վճարներն օգտագործվում են ծրագրի ընթացիկ ծախսերի համար. ներկերի ընդունման, հանրային ուսուցման ծախսեր, անձնակազմի վարձատրություն և այլ ծախսեր:



## Կապ մեզ հետ

Ավելի իմանալու համար կամ հանձնման կետերը գտնելու համար խնդրում ենք այցելել [www.paintcare.org](http://www.paintcare.org) կամ զանգահարել (855) 724-6809 հեռախոսահամարով:

